



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական
կենտրոնի խորհրդի 13.07.2012 թ. № 08-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՆԵԼԼԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ**

ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(AMICUS CURIAE)

№ 08-12-Ա

ք.Երևան

13.07.2012 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը, մասնակցությամբ համակարգող Արա Չոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Զեյնալյանի, նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Քաղաքացի Նելլի Մկրտչյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

Հարցի կարևորությունը.

Վերաքննության իրավունքն իրենից լուրջ կարևորություն է ներկայացնում անձի իրավունքների պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքի իրականացման առումով: Հարցը կարևորվում է նաև այն առումով որ հաճախ անձինք

հնարավորություն չեն ունենում բողոք բերելու և իրականացնելու իրենց իրավունքների պաշտպանությունը՝ օրենսդրության մեջ առկա թերությունների և բացթողումների պատճառով: Թեև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (**այսուհետ՝ ՄԻԵԴ**) իր նախադեպային որոշումներում այս հարցի կապակցությամբ արտահայտել է իր հստակ դիրքորոշումը, այնուամենայնիվ, խնդիրը մեզ մոտ առկա իրավակարգավորման առումով շարունակում է արդիական մնալ:

Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).

Ուսումնասիրության առաջին մասում ներկայացվում են վերոհիշյալ հարցերի կապակցությամբ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումները, որտեղ դատարանն իր հստակ ձևավորված պրակտիկան ունի վերաքննության իրավունքի կապակցությամբ, իսկ երկրորդ մասը վերաբերում են վերաքննության և դատարանի մատչելիության իրավունքին: Ուսումնասիրության երրորդ մասում ներկայացվում է էական վնասի մեկնաբանման վերաբերյալ ՄԻԵԴ չափանիշները: Սույն եզրակացության մեջ խնդրո առարկան կներկայացվի հետևյալ ասպեկտներով՝

- ***վերաքննության իրավունքի.***
- ***դատարանի մատչելիության.***
- ***էական վնասի բնութագրման.***

Սույն ուսումնասիրությունը հիմնված է միջազգային և համեմատական իրավունքի նշանակալից հիմքի, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի (**այսուհետ՝ Կոնվենցիա**) մեկնաբանման այնպիսի սկզբունքների վրա, ինչպիսիք են դատարանի մատչելիությունը, իրավական որոշակիությունը և արդար դատաքննությունը:

I. Վերաքննության իրավունքը եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում.

1. Իր մի շարք վճիռներում ՄԻԵԴ-ն անդրադարձել է վերաքննիչ և վճռաբեկ վարույթների նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիության խնդրին: Համաձայն ՄԻԵԴ պրակտիկայի՝ այն պետություններից, որոնք ունեն վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, պահանջվում է պատասխանատվության ենթարկվող անձանց համար այդ դատարաններում ապահովել 6-րդ հոդվածով նախատեսված հիմնական երաշխիքները: Սակայն վերաքննիչ և վճռաբեկ վարույթների նկատմամբ 6-րդ հոդվածի կիրառելիության կարգը կախված է տվյալ վարույթի առանձնահատկություններից:

Այս առումով ՄԻԵԴ-ը հաշվի է առնում պատասխանող պետության դատական համակարգի առանձնահատկությունները և վերաքննիչ ու վճռաբեկ դատարանների տեղն այդ համակարգում:

2. Դեկուրտն ընդդեմ Բելգիայի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ. *«դատական որոշումները միշտ իրենց հետևանքներն են ունենում շահագրգիռ անձանց համար*: Քրեական գործերում, հատկապես, մեղադրյալն ասպարեզից չի հեռանում, երբ առաջին ատյանի կամ վերաքննիչ դատարանների որոշումների դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվում: Չնայած նրան, որ վճռաբեկ դատարանը կարող է միայն հաստատել կամ բեկանել այդ ատյանների որոշումները (և ոչ թե փոփոխել դրանք կամ դրանց փոխարեն ընդունել այլ որոշում), վճռաբեկ դատարանի որոշումը կարող է ազդել շահագրգիռ անձի վիճակի վրա: Վերջինս, այդ որոշումների բեկանման և գործը նոր քննության ուղարկելու արդյունքում, կորցնում է կամ մեղավոր ճանաչվածի, կամ արդարացվածի կարգավիճակը: Վճռաբեկ դատարանի որոշումը երբեմն ունի էլ ավելի ուղղակի ազդեցություն»¹:
3. Ավելի բարձր ատյան բողոքարկելու հնարավորությունը կազմում է ներպետական պաշտպանության միջոց, որը պետք է սպառվի Կոնվենցիայի 35-րդ հոդվածին համապատասխան: Ըստ էության, վերաքննիչ դատարանը կարող է հաստատել այն փաստը, որ առաջին ատյանի վարույթը բոլոր առումներով չի իրականացվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ²:
4. Առավել բարձր ատյան վերաքննության իրավունքը արձանագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում: Այնուամենայնիվ, եթե սահմանված է վերաքննությունը և ներկայացված է բողոքը, և այդ ատյանի դատարանը կոչված է համապատասխան եզրահանգումներ անելու, ապա 6-րդ հոդվածի 1-ին մասը գործում է³: Մա նաև նշանակում է, որ եթե ներպետական իրավունքը նախատեսում է բողոքարկման միջոց, ապա պաշտպանության այդ միջոցը չի կարող սահմանափակվել իր էությամբ կամ

¹Delcourt v. Belgium, 17 January 1970, § 25, Series A no. 11

²Edwards v. the United Kingdom, 16 December 1992, § 38-39, Series A no. 247-B; De Haan v. the Netherlands, 26 August 1997, §54, Reports of Judgments and Decisions 1997-IV

³Delcourt v. Belgium, 17 January 1970, § 25, Series A no. 11; Sutter v. Switzerland, 22 February 1984, §§26-28, Series A no. 74

անհամաչափ կերպով⁴: Եթե այդ սահմանափակումներն ունեն խտրական ազդեցություն, ապա սա ևս հանդիսանում է Հոդված 6-րդի խախտում՝ Հոդված 14-ի լույսի ներքո ⁵:

5. ՄԻԵԴ նախադեպի վերլուծությունից երևում է, որ ներպետական միջոցների սպառման և, ընդհանրապես, շահագրգիռ անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության համար վերաքննության և վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորությունն ունի առանձնակի կարևորություն, քանի որ այդ ատյանները կարող են արձանագրել 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի խախտումներ:
6. Այս դեպքում դիմողը գրկված է եղել առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկելու հնարավորությունից, ինչի հետևանքով կրել է էական վնաս: Բողոքարկման հնարավորությունն այս պարագայում սահմանափակված է օրենքով, որտեղ սահմանված է, որ գույքային պահանջի արժեքը պետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի հիսունապատիկը, այն է՝ 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամը:
7. Հոդված 6-ը չի գրկում Պետություններին վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան մուտքը համակարգող կանոնակարգերի մշակումից պայմանով, որ դրանց նպատակը լինի արդարադատության պատշաճ իրականացումն ապահովելը: Հետևաբար, 6-րդ հոդվածի խախտում չի այն դեպքը, երբ դիմումատուի բողոքը չի ընդունվում այդպիսի դատարանի կողմից վերջինիս կողմից թույլ տրված ընթացակարգային սխալի պատճառով: Եթե վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի մերժումը դատարանի բացթողման արդյունք է, ապա մատչելիության իրավունքը այդ մերժումով խախտվել է ⁶:
8. Դատարանի մատչելիության իրավունքի խախտում է նաև այն դեպքը, երբ Կոնվենցիայի սկզբունքների համատեքստում անհամաչափ սահմանափակումներ են մտցվում, ինչպես, օրինակ, սույն դեպքում է: Սահմանելով գույքային պահանջների դեպքում 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամի շեմ՝ օրենսդիրն այդպիսով հանգեցրել է դատարանի մատչելիության

4 Poitrimol v. France, 23 November 1993, § 35-38, Series A no. 277-A; Khalfaoui v. France, no. 34791/97, §§ 42-54, ECHR 1999-IX

5 Hoffmann v. Germany, no. 34045/96, § 66, 11 October 2001

⁶ Report of the Commission of 21 October 1998, Bogdanska Dimova, paras 52-59

սահմանափակում, որը չի համապատասխանում ՄԻԵԴ-ի կողմից որդեգրած սկզբունքներին:

9. Կուդլան ընդդեմ Լեհաստանի գործով վճռում ՄԻԵԴ ամրագրել է, որ. *«13-րդ հոդվածն ուղղակիորեն արտահայտելով պետությունների պարտավորությունը՝ առաջինը պաշտպանելու մարդու իրավունքները և առաջին հերին իրենց սեփական իրավական համակարգի շրջանակում, անձի համար ստեղծում է լրացուցիչ երաշխիք՝ ապահովելու համար, որ նա արդյունավետորեն օգտվի իր այդ իրավունքներից:*

ՄԻԵԴ-ի կարծիքով, 13-րդ հոդվածի առարկան, ինչպես բխում է *travaux preparatoires*-ից՝ հետևյալն է՝ *միջոցներ ապահովել, որոնց օգնությամբ անձինք կարող են պետական մակարդակում վերականգնել Կոնվենցիայով նախատեսված իրենց խախտված իրավունքները*, մինչև որ կօգտագործվի ՄԻԵԴ-ին դիմելու միջազգային կառուցակարգը... 13-րդ հոդվածի պահանջներն ավելի շուտ պետք է համարվեն 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներն ամրապնդող, քան որպես այդ հոդվածով նախատեսված իրավական վարույթներում անձանց չափազանց ձգձգումների չենթարկելու ընդհանուր պարտավորությամբ պայմանավորված»⁷:

10. Այս տեսանկյունից, օրենսդիրը սահմանելով որոշակի սահմաններում գույքային պահանջի գործերով վերաքննիչ բողոք ներկայացնելու արգելք, այդպիսով իսկ հանգեցրել է նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման: Այդ խախտումը բացառելու համար ցանկալի կլիներ այդ սահմանափակումները վերացնել և յուրաքանչյուր գործ քննել տվյալ գործի հանգամանքների և սահմանված սկզբունքների համատեքստում՝ վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

II. Վերաքննության իրավունքը և դատարանի մատչելիությունը.

11. ՄԻԵԴ-ն իր նախադեպային որոշումներում բազմիցս անդրադարձել է դատարանի մատչելիության իրավունքին: Դատարանը նշյալ հոդվածի մանրակրկիտ վերլուծության և մեկնաբանության արդյունքում գտել է, որ 6-րդ հոդվածը ներառում է նաև *դատարանի մատչելիության իրավունքը՝*

⁷ Kudła v. Poland [GC], no. 30210/96, § 152, ECHR 2000-XI

չնայած այն հանգամանքին, որ այդ իրավունքը հստակորեն ամրագրված չէ Կոնվենցիայում:

12. ՄԻԵԴ-ը, վկայակոչելով Կոնվենցիայի նախաբանում ամրագրված իրավունքի գերակայության սկզբունքը, ընդգծել է, որ քաղաքացիական հարցերի կապակցությամբ դժվար է խոսել իրավունքի գերակայության մասին, եթե բացակայում է դատարան դիմելու հնարավորությունը: Դատարանը 6-րդ հոդվածը մեկնաբանել է՝ ելնելով «քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված իրավունքի սկզբունքներից»: Ըստ Դատարանի, **դատարանի մատչելիության սկզբունքն իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքն է:**
13. ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում ամրագրել է, որ. **«Դատարանի իրավունքը»**, որի մի մասն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ: Այն ենթակա է սահմանափակումների, սակայն այդ սահմանափակումները չպետք է անձի դատարանի մատչելիության իրավունքը սահմանափակեն կամ նվազեցնեն այն կերպ կամ այն չափով, որ **խախտվի իրավունքի բուն էությունը**⁸: Դրանք նաև պետք է լինեն բավականաչափ պարզ և հստակ կամ դրույթները պետք է պարունակեն **երաշխիքներ ընդդեմ թյուրիմացությունների** /սխալ հասկանալուն/⁹: Այս առումով ևս դատարանի վերանայումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե այն իրավունքները, **որոնք տեսական և թվացյալ են, այլ այն իրավունքները, որոնք գործնական և արդյունավետ են**¹⁰:
14. Վերջապես, նման սահմանափակումները չեն համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե դրանք **չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ կիրառվող միջոցի և նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն**¹¹:

⁸ Hornsby v. Greece, 19 March 1997, § 40, Reports of Judgments and Decisions 1997-II, Golder v. the United Kingdom, 21 February 1975, Series A no. 18; Fayed v. the United Kingdom, 21 September 1994, Series A no. 294-B; Ashingdane v. the United Kingdom, 28 May 1985, Series A no. 93; García Manibardo v. Spain, no. 38695/97, ECHR 2000-II;

⁹ Bellet v. France, 4 December 1995, §§ 36-37, Series A no. 333-B

¹⁰ Airey v. Ireland, 9 October 1979, § 24, Series A no. 32

¹¹ Levages Prestations Services v. France, 23 oct. 1996, § 40, 1996-V, Brualla Gómez de la Torre v. Spain, 19 dec. 1997, § 33, 1997-VIII

15. Դատարանը որդեգրել է սահմանափակումների որոշակի չափանիշներ, որոնք հանգում են հետևյալին՝
- *Սահմանափակումները չպետք է խոչընդոտեն մատչելիության /հասանելիության/ բուն էությունը.*
 - *Սահմանափակումները պետք է հետապնդեն իրավաչափ նպատակ և լինեն համաչափ.*
 - *Առանձին խմբերի վերաբերող սահմանափակումներ*
 - *Սահմանափակումներ՝ երաշխավորված անվտանգության նկատառումներով¹²:*
16. Նշված սահմանափակումների վերլուծության և սույն գործի հանգամանքների համադրման արդյունքում, կարող ենք հանգել այն եզրակացության, որ գույքային պահանջ ներկայացնելու համար գումարային սահմանափակումներ ամրագրելը դուրս է գալիս ՄԻԵԴ-ի կողմից որդեգրված սկզբունքների շրջանակից և ձեռք է բերում կամայական բնույթ, քանի որ չի հետապնդում իրավաչափ նպատակ, հակասում է դատարանի մատչելիության իրավունքին, չի մտնում առանձին խմբերին վերաբերող սահմանափակումների մեջ և չի հանդիսանում սահմանափակված՝ անվտանգության նկատառումներից ելնելով:
- Այլ կերպ ասած, այս դրույթը սահմանափակման և որևէ չափանիշների մեջ չի տեղավորվում: Ավելին, այն հանգեցնում է դատարանի մատչելիության իրավունքի խախտմանը, ուստի դրա առկայությամբ ոտնահարվում են անձանց իրավունքները և սահմանափակվում են խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունները:
17. Վերոհիշյալ հանգամանքը հակասում է ՄԻԵԴ-ի որդեգրած սկզբունքին, ըստ որի *«Որպեսզի դատարանի մատչելիության իրավունքը լինի արդյունավետ, անձը պետք է իր իրավունքների իրականացմանը միջամտող իրավական ակտը վիճարկելու հստակ և իրական հնարավորություն ունենա»¹³*, որպիսի հնարավորությունից զրկված է եղել սույն գործով դիմողը: *Այս հանգամանքը գործնականում հանգեցրել է դատարանի մատչելիության իրավունքի արդյունավետության կորստի:*

¹² Theory and practice of the European Convention on Human rights, Fourth edition, Antwerpen-Oxford, 2006 Intersentia, pp. 570-578

¹³ Bellet v. France, 4 December 1995, § 36, Series A no. 333-B

III. Էական վնասի հասկացությունը՝ Եվրոպական դատարանի չափանիշների համապատասխան.

11. Դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ Հոդված 35-ի 3-րդ մասով սահմանված չափանիշը պետք է քննարկել այն տեսանկյունից, թե արդյոք դիմումատուն կրել է էական վնաս¹⁴:
12. ***De minimis non curat praetor*** սկզբունքը ենթադրում է, որ ընդունելիության չափանիշները ելնում է այն մտքից, որ իրավունքի խախտումը, զուտ իրավական տեսանկյունից, պետք է հասնի խախտման գոնե նվազագույն աստիճանի, որպեսզի երաշխավորի միջազգային դատարանի կողմից ուսումնասիրությունը: Այս նվազագույն աստիճանի գնահատականը հարաբերական է և կախված է կոնկրետ գործի հանգամանքներից: Այս առումով ***խախտումը պետք է գնահանտել՝ հաշվի առնելով դիմողի սուբյեկտիվ ընկալումը և այն, թե օբյեկտիվորեն ինչն է վտանգված տվյալ գործում***¹⁵: Այլ կերպ ասած, էական վնասի բացակայությունը կարող է հիմնված լինել այնպիսի չափանիշների վրա, ինչպիսիք են ***վեճի առարկայի ֆինանսական հետևանքները կամ գործի կարևորությունը դիմումատուի համար***¹⁶:
13. Էական վնասի առկայության հանգամանքը քննելու ժամանակ ՄԻԵԴ-ը կոնկրետ գործով հաշվի է առնում նաև դիմումատուի սոցիալական վիճակը: Մեկ դեպքում ՄԻԵԴ-ը 90 եվրոյի կորուստը կարող է համարել էական վնաս, իսկ մյուս դեպքում, օրինակ, 200 եվրոյի կորուստը՝ ոչ էական վնաս:
14. Սույն դեպքում դիմումատուն կրել է 45.000 (քառասունհինգ հազար) դրամի վնաս, ինչը ՀՀ պարագայում կարող ենք հստակորեն համարել էական: Էական լինելու փաստը հաստատվում է հետևյալ հանգամանքով. «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում ամսական նվազագույն աշխատավարձը սահմանված է 32.500 (երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, իսկ ՀՀ-ում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 43.499.8 դրամ է: Մա նշանակում

¹⁴ Adrian Mihai Ionescu v. Romania (dec.), no. 36659/04, 1 June 2010, and Korolev v. Russia (dec.), no. 25551/05, 1 July 2010).

¹⁵ Korolev v. Russia (dec.), no. 25551/05, ECHR 2010

¹⁶ Adrian Mihai Ionescu v. Romania (dec.), no. 36659/04, 1 June 2010

է, որ որպէսզի անձը կարողանա իր նվազագոյն ամսական պահանջները բավարարել, ապա նա պետք է նվազագոյնը ունենա 43.499,8 ՀՀ դրամ գումար:

Սույն գործի պարագայում դիմողը կորցրել է 45.000 ՀՀ դրամ գումար, ինչն ավելի շատ է, քան մեր պետությունում սահմանված նվազագոյն աշխատավարձը և սպառողական զամբյուղոր: Այս պարագայում նշված գումարի կորուստը դիմողի համար **ունեցել է էական նշանակություն** և զրկել է նրան մեկ ամսվա պահանջները հոգալու հնարավորությունից: Այս հանգամանքը դիմողի համար ստեղծել է անբարենպաստ իրավիճակ:

16. Այս խնդրին պետք է նայել Եվրոպական դատարանի դիրքորոշումների և սկզբունքների համատեքստում: Այդ դեպքում հստակ է, որ չի կարելի բոլոր դեպքերը միևնույն կերպ ընկալել: Անհրաժեշտ է հաշվի առնել և՛ դիմողի ֆինանսական դրությունը, և՛ անձի գոյության համար անհրաժեշտ նվազագոյն սահմանային շեմը, և՛ օբյեկտիվորեն ինչ խնդիրներ կարող են առաջանալ այդ սահմանափակումների հետևանքով: *Այս հանգամանքների համադրման արդյունքում, եթե հաստատվում է, որ դիմողը կրել է էական վնաս, ապա անկախ գումարի չափից այդ գործը ենթակա է բողոքարկման և վերաքննիչ, և վճռաբեկ դատարան:*
17. Այդպիսի դրույթի ամրագրումն օրենսդրության մեջ կարող է առավելագոյնս պաշտպանել անձի իրավունքները՝ վերաքննության իրավունքի իրականացման և վնասների փոխհատուցում ստանալու տեսանկյունից:

Եզրակացություն.

Այսպիսով, պետությունների վրա դրված է հստակ պարտավորություն՝ առաջինը պաշտպանելու մարդու իրավունքները և առաջին հերթին իրենց սեփական իրավական համակարգի շրջանակում: Պետությունները նաև պետք է լրացուցիչ երաշխիքներ սահմանեն՝ ապահովելու համար, որպէսզի անձինք արդյունավետորեն օգտվեն իրենց այդ իրավունքներից: Անձանց՝ այդ իրավունքները սահմանափակող նորմի առկայությունը ՀՀ օրենսդրության մեջ հանգեցնում է պետության պոզիտիվ պարտավորության խախտման, ինչպէս նաև արգելափակում է խախտված իրավունքները վերականգնելու բոլոր հնարավորությունները: Այս սահմանափակումներն իրենց հերթին առաջ են բերում դատարանի մատչելիության իրավունքի խախտում: Իսկ բոլոր դեպքերում գործի հանգամանքների նկատմամբ միևնույն դիրքորոշման արտահայտումը ի չիք է դարձնում էական վնասի բուն էությունը և զրկում այդպիսի վնաս կրած անձանց իրավական պաշտպանության

միջոցներից (սույն դեպքում վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությունից): Այս պարագայում իրավունքի գերակայության առումով ավելի արդյունավետ կլինե՞ր միջև 50.000 դրամ գումարի վերաբերյալ գույքային պահանջի գործերով վերաքննության սահմանափակման վերացումը: Էական վնասի գոյության փաստի արձանագրումը կամ հերքումը յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի ելնելով կոնկրետ գործի հանգամանքների համակողմանի ուսումնասիրությունից:

Համակարգող՝

Արա Ջոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան